ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

100-օրյա հաշվետվություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մեսրոպ Առաքելյանի հաշվետվությունը՝ պաշտոնավարման 100 օրվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ

Հայաստանի ու Արցախի սոցիալական անվտանգության ապահովումը մեր առաքելությունն է

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արցախահայության աջակցության ծրագրեր

1. Արցախի չափահաս և անչափահաս քաղաքացիներին՝ 68,000 դրամ միանվագ աջակցություն, անշարժ գույք չունենալու դեպքում՝ հավելյալ 15,000 դրամ
   - ✓ ***Աջակցություն ստացած՝ շուրջ 100,000 քաղաքացի, տրամադրված աջակցություն՝ շուրջ 7 մլրդ դրամ***

2. Արցախի վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս և անչափահաս քաղաքացիներին՝ 300,000 դրամ աջակցության տրամադրում
   - ✓ ***Աջակցություն ստացած՝ շուրջ 30,000 քաղաքացի, տրամադրված աջակցություն՝ շուրջ 9 մլրդ դրամ***

3. Պատերազմական ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով բնակության համար ոչ պիտանի դարձած բնակելի անշարժ գույք ունեցող արցախցիներին միանվագ՝ 250 հազար դրամ աջակցության տրամադրում
   - ✓ ***Աջակցություն ստացած՝ 3,000 քաղաքացի, տրամադրված աջակցություն՝ շուրջ 700 մլն դրամ***

4. Սեփականության իրավունքով իրենց պատկանող տանը Արցախի վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված արցախցիներին հյուրընկալող քաղաքացիներին՝ վեցամսյա աջակցության տրամադրում. Հայաստանում ապրող հյուրընկալին յուրաքանչյուր չափահաս արցախցու համար՝ ամսական 30,000 դրամ, իսկ Արցախում ապրող հյուրընկալին՝ 45,000 դրամ
   - ✓ ***Աջակցություն ստացած՝ շուրջ 1,800 քաղաքացի, տրամադրված աջակցություն՝ շուրջ 125 մլն դրամ (դեկտեմբեր)***
     Աջակցություն ստացած՝ շուրջ 900 քաղաքացի, տրամադրված աջակցություն՝ շուրջ 76 մլն դրամ (հունվար)

5. Սեփականության իրավունքով իրենց պատկանող տանը Արցախի վերահսկողության ներքո գտնվող համայնքների բնակելի անշարժ գույքը ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով կորցրած արցախցիներին հյուրընկալող քաղաքացիներին՝ եռամսյա աջակցության տրամադրում. Հայաստանում ապրող հյուրընկալին յուրաքանչյուր չափահաս արցախցու համար՝ ամսական 30,000 դրամ, Արցախում ապրող հյուրընկալին՝ 45,000 դրամ
   - ✓ **Աջակցություն ստացած ՝ շուրջ 200 քաղաքացի, տրամադրված աջակցություն՝ շուրջ 12,5 մլն դրամ (դեկտեմբեր)**
     Աջակցություն ստացած ՝ շուրջ 120 քաղաքացի, տրամադրված աջակցություն՝ շուրջ 8,5 մլն դրամ (հունվար)

6. Արցախի գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովում: Համայնքներում իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքներում ընդգրկվող (մինչև 3 ամիս ժամկետով) արցախցիներին մեկ աշխատանքային օրվա համար՝ 8,000 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և պարտադիր վճարները
   - ✓ ***Պոտենցիալ շահառուներ՝ 160 քաղաքացի, բյուջե՝ 52 մլն դրամ***

7. Աշխատանքային փորձ ձեռք բերելու նպատակով արցախցիների համար վճարովի պրակտիկայի ծրագրի իրականացում. ծրագրում ներգրավված Արցախի գործազուրկ քաղաքացիներին՝ ամսական 100,000 դրամ զուտ աշխատավարձ՝ 3 ամիս ժամկետով. գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին՝ ամսական 34,000 դրամ վարձատրում
   - ✓ ***Աջակցություն ստացած՝ շուրջ 125 քաղաքացի, պետբյուջե՝ 28 մլն դրամ***

8. Արցախցի մինչև 5 տարեկան երեխաներին՝ միանվագ 20,000 դրամ աջակցության տրամադրում
   - ✓ ***Աջակցություն ստացած՝ շուրջ 14,700 երեխա, տրամադրված աջակցություն՝ շուրջ 293 մլն դրամ***

9. 2020 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին Արցախի բնակչության սպառած գազի և էլեկտրաէներգիայի ծախսերի փոխհատուցում
   - ✓ ***Տրամադրված աջակցություն՝ 1 մլրդ դրամ***

10. Արցախցի կենսաթոշակառուների և նպաստառուների 2020 թվականի դեկտեմբեր ամսվա կենսաթոշակի և նպաստի վճարում
   - ✓ ***Տրամադրված գումար՝ 940 մլն դրամ***

11. Արցախի քաղաքացիների աջակցության միջոցառումների շրջանակում Արցախում կատարվող վճարումների գործընթացում ներգրավված «Արցախփոստ» ՓԲԸ-ի անձնակազմին աշխատավարձի և դրան հավասարեցված այլ եկամտի վճարում
   - ✓ ***Տրամադրված գումար՝ 25 մլն դրամ***

12. Արցախում հաշվառված կամ փաստացի բնակված քաղաքացիներին աջակցության տրամադրում՝ ամսական 68 հազար դրամ՝ 4 ամիս ժամկետով
   - ✓ ***Պոտենցիալ շահառուներ՝ շուրջ 108,000 արցախցի, բյուջե՝ 30 մլրդ դրամ***

13. Հայաստանում ժամանակավոր բնակվող արցախցիներին նախարարության կողմից կացարանների տրամադրում
    - ✓ ***Շահառուներ՝ շուրջ 1,500 քաղաքացի***

14. Արցախի աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության հետ համատեղ արցախցիների սոցիալական կարիքների սպասարկման նպատակով՝ սոցիալական շտապօգնության արագ արձագանքման՝ www.soc911.am հարթակի ստեղծում. կարիքներ ունեցողների և օգնություն տրամադրել ցանկացողների տվյալների հավաքագրում և համադրում

15. Արցախի աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության հետ համատեղ Արցախում գրանցված և գործունեություն ծավալող իրավաբանական անձանց՝ փաստացի վճարած եկամտային հարկի չափով փոխհատուցման վեց ամսյա ծրագրի իրականացում



ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Զոհված անձանց ընտանիքների և վիրավորում ստացած անձանց աջակցության ծրագրեր

16. Արցախի պաշտպանության ընթացքում քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց՝ 1-ից 5 միլիոն դրամ միանվագ աջակցություն
    - ✓ ***Աջակցություն ստացած՝ 34 քաղաքացի (30-ը՝ զոհերի ընտանիք, 4-ը՝ հաշմանդամություն ունեցող անձ), տրամադրված աջակցություն՝ 156 մլն դրամ***

17. Ռազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած և բժշկական կենտրոններում ստացիոնար բուժօգնություն ստացած զինծառայողներին (բացառությամբ՝ 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցողների)՝ 500 հազար դրամ աջակցության տրամադրում
    - ✓ ***Աջակցություն ստացած՝ շուրջ 4,000 քաղաքացի, տրամադրված աջակցություն՝ շուրջ 2 մլրդ դրամ***

18. Պատերազմի հետևանքով անհայտ կորած և գերեվարված զինծառայողների ընտանիքներին՝ ամսական 300,000 դրամ աջակցություն՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով

19. Ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք կամ խեղում ստացած զինծառայողների առանձին խմբերին՝ ամսական 300,000 դրամ աջակցություն

20. Զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին տրվող ամենամսյա պարգևավճարի չափերի սահմանում՝ ըստ պարգևավճար ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների. շահառուների շրջանակի վերանայում, ընդլայնում

21. Բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպում՝ պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողի կամ քաղաքացիական անձի գտնվելու վայրում (բուժհաստատություն, տուն)
    - ✓ ***Իրականացրած փորձաքննություն՝ շուրջ 800 անձ, որից՝ 590-ը հաշմանդամություն ունեցող անձ***

      *1-**ին խումբ - 82 անձ, 2-րդ խումբ - 173 անձ, 3-րդ խումբ - 335 անձ***

22. Աջակցող միջոցների տրամադրում՝ պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողներին ու քաղաքացիական անձանց՝ անկախ որևէ սոցիալական խմբում ներառված լինելու հանգամանքից. աջակցող միջոցների տրամադրման ընթացակարգի պարզեցում
    - ✓ ***Աջակցություն ստացած՝ 3,018 անձ (6,096 աջակցող միջոց)***

23. Բազմամասնագիտական խմբերի կողմից պատերազմի ընթացքում վիրավորում ստացած և պրոթեզավորման անհրաժեշտություն ունեցող անձանց կարիքների բազմակողմանի գնահատման գործընթացի իրականացում
    - ✓ ***Աջակցություն ստացած՝ շուրջ 110 քաղաքացի***

24. Առավել ֆունկցիոնալ, միջազգային չափանիշներին համապատասխան պրոթեզների տրամադրում՝ պատերազմի հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած անձանց

- ✓ ***Պոտենցիալ շահառուներ՝ շուրջ 130 անձ***

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի սահմանամերձ համայնքների աջակցության ծրագրեր

25. Պատերազմի ընթացքում հրետակոծության հետևանքով անշարժ գույքին վնաս հասցված ՀՀ քաղաքացիներին՝ միանվագ դրամական աջակցություն
    - ✓ ***Աջակցություն ստացած՝ Սյունիքի մարզի 71 քաղաքացի, բյուջե՝ շուրջ 45 մլն դրամ***

      (աջակցություն կստանա ևս՝ շուրջ 50 քաղաքացի)

26. Պատերազմի հետևանքով Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին մինչև նոր տների կառուցումը՝ միանվագ 300,000 դրամ և 6 ամսվա համար՝ 68,000 դրամ աջակցության տրամադրում
    - ✓ ***Աջակցություն ստացած՝ շուրջ 50 քաղաքացի***

27. Պատերազմական գործողությունների հետևանքով սահմանամերձ դարձած Սյունիքի և Գեղարքունիքի մարզի շուրջ 40 բնակավայրերի ընդգրկում՝ ՀՀ սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության ծրագրում

(Անշարժ գույքի հարկի ամբողջական փոխհատուցում, բնական գազի և էլեկտրաէներգիայի, օգտագործված ոռոգման ջրի վճարների 50 %-ով փոխհատուցում, ԽՍՀՄ ավանդների փոխհատուցում՝ առանց տարիքային սահմանափակման, դպրոցական դասագրքերի անվճար տրամադրում)

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակներ և նպաստներ

28. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և շրջանառում. նախատեսվում է կենսաթոշակի հետ հավելումների տրամադրում՝ 90 տարեկան և բարձր տարիքի կենսաթոշակառուներին

29. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և շրջանառում, որով հաշմանդամ երեխայի մինչև 18 տարին լրանալը խնամելու ժամանակահատվածի ամբողջական հաշվառում՝ որպես ծնողի աշխատանքային ստաժ

30. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և շրջանառում, որով ամեն տարի բանկ այցելելու պահանջը կհանվի 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և 90 տարեկանից բարձր կենսաթոշակառուների համար

31. Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու կարգի լրամշակում. պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկից ծննդօգնության պետական հավաստագիր ներկայացնելու պահանջի հանում

32. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու ընթացակարգերի պարզեցում. նպաստի նշանակում ծնողի դիմումի հիման վրա՝ առանց դիմումին կից փաստաթուղթ ներկայացնելու

33. Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում անկանխիկ եղանակով կենսաթոշակի և նպաստի վճարում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անձն առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունի, կամ լրացել է նրա 75 տարին

34. ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թ. հունիսի 10-ը ներդրված ավանդների փոխհատուցում՝ մինչև 1938 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված քաղաքացիներին

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական աջակցություն

35. Միասնական սոցիալական ծառայության ստեղծում՝ սոցիալական պաշտպանության ոլորտի չորս մարմինների՝ սոցիալական ապահովության ծառայության, բժշկասոցիալական փորձաքննության, զբաղվածության պետական գրասենյակների և մարզային ենթակայության սոցիալական աջակցության գործակալությունների ու համայնքային ենթակայության սոցիալական աջակցության բաժինների ներգրավմամբ

36. Միասնական սոցիալական ծառայությունների տեղեկատվական համակարգի ստեղծում. ոլորտային բազաների ամբողջական ինտեգրում և արդիականացում

37. Միասնական սոցիալական ծառայությունները միավորող մեկ ընդհանուր հարթակի՝ տեղեկատվական կայքի մշակում, ստեղծում

38. Շիրակի մարզում հաշվառված տնակներում կամ ոչ հիմնական շինություններում բնակվող անապահով ընտանիքներին՝ մեկական խորանարդ մետր վառելափայտի տրամադրում

39. Սոցիալական շտապօգնության soc-bank.am հարթակի մշակում. «Սոցիալական շտապօգնություն» ծրագիր՝ ուղղված ՀՀ-ում բնակվող անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց սոցիալական խնդիրների լուծմանը

40. ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հետ համագործակցությամբ պարենային օգնության տրամադրում Հայաստանի՝ առավել խիտ բնակեցված մարզերից Կոտայքի և Երևանի սոցիալապես անապահով, կորոնավիրուսի համաճարակի տնտեսական հետևանքներից տուժած քաղաքացիներին
    - ✓ ***Աջակցություն ստացած՝ շուրջ 44,000 ընտանիք***

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

41. Կամավորի աշխատանքի ինստիտուտի զարգացման նպատակով «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» օրենքի նախագծի մշակում և ներակայացում ՀՀ Կառավարությանը

42. Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագծի մշակում. օրենսգրքի կարգավորումների համապատասխանեցում՝ Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին, իրավակիրառ պրակտիկայի խնդիրների լուծում

43. Ուսուցման, գործատուի մոտ աշխատանքային փորձառության, աշխատանքի ընդունման դեպքում գործատուին փոխհատուցման, հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ծրագրերում պայմանների վերանայում և բարելավում

44. Սոցփաթեթի հատկացման կարգում փոփոխությունների նախագծի մշակում և շրջանառում. սոցփաթեթի շահառու կազմակերպությունների ցանկի համալրում նոր պետական կազմակերպություններով, սոցփաթեթի համար հատկացվող միջոցների ուղղում մարզա-առողջարարական, սպորտային համալիրների ծառայություններից օգտվելուն

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաշմանդամության ոլորտի բարեփոխումներ

45. Հաշմանդամության սահմանման մոդելից անցում՝ ֆունկցիոնալության գնահատման մոդելի՝ անձի կարիքների բազմակողմանի գնահատում, հաշմանդամության դիտարկում՝ ըստ անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին», «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին», ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի հավանություն Կառավարության կողմից: Օրենսդրական փաթեթի ընդունմամբ՝ անհրաժեշտ իրավական հիմքերի ստեղծում՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովման, հաշմանդամության հիմքով խտրականության բացառման համար

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեխաների իրավունքներ

46. Սյունիքի մարզի Կապան քաղաքում գործող երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի վերակազմավորում՝ «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի
    - ✓ ***Առավելագույնը 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամքի տրամադրում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 50 երեխայի, ցերեկային աջակցության ծառայությունների մատուցում 100 երեխայի՝ առավելագույնը 1 տարի ժամկետով***

47. «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի վերակազմավորում
    - ✓ ***Շուրջօրյա խնամքի ու աջակցության տրամադրում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 0-ից 18 տարեկան երեխաների՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով, ցերեկային աջակցության ծառայությունների մատուցում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-ից 18 տարեկան երեխաների՝ առավելագույնը 1 տարի ժամկետով***

48. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին՝ գնահատված կարիքին համապատասխան ծառայությունների մատուցման ծրագրի նախագծում, կարիքների գնահատման գործընթացի մեկնարկ

49. Արցախի աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության հետ համատեղ ՍՕՍ մանկական գյուղերի «Կոտայք» մասնաճյուղում ապրող հայաստանցի և արցախցի երեխաների համար շարադրությունների մրցույթի կազմակերպում
   - ✓ ***Մասնագիտական գրքեր՝ երեխաներին, մրցանակներ՝ լավագույն շարադրությունների հեղինակներին***

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդագրություն և ընտանիքի սոցիալական երաշխիքներ

50. «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և շրջանառում, համաձայն որի՝ չորս և ավելի երեխա ունեցող ընտանիքներին՝ սոցիալական, կրթական, առողջապահական, կացարանային և այլ երաշխիքների ու արտոնությունների տրամադրում